ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ[2]

Կատերինա Ալթունյան

Բանալի բառեր՝ *քաղաքական էլիտա, քաղաքական որոշում, քաղաքական իշխանություն, քաղաքական դերակատար, արդյունավետություն, էլիտայի ձևավորում, կառավարում, քաղաքականություն:*

Ցանկացած հասարակություն ներկայանալի է էլիտայով: Այն հասարակությունների լեզվամտածողությունում, ուր «էլիտա» հասկացությունը նույնանում է առաջնորդության, տաղանդավոր մարդկանց գեներացման հետ, պահպանվում է, ինչպես Ն.-Բերդյաևն է գրել, լավագույններին գտնելու փափագը [1]: Հասարակության գիտակցական համակարգն իր արտացոլումն է գտնում էլիտայում և էլիտայի մասին հասարակական պատկերացումներում: Որոշներում դրանք դրական են, մյուսներում ոչ: Ազգի արժեհամակարգային կայացման փուլն անցած որոշ հասարակություններում ձևավորվել և արմատավորվել են «էլիտա» հասկացության մասին բացասական պատկերացումներ՝ մարդկանց արժեհամակարգի խեղաթյուրման, էլիտայի անարդյունավետության և այլ պատճառներով [2]: Դրանից ուղղակիորեն չի հետևում, այնուամենայնիվ, որ այդպիսի հասարակություններում էլիտա ունենալու հասարակական պահանջ չկա: Այդ պահանջն ունի յուրաքանչյուր, թեկուզ դեռ քաղաքակրթական և գիտակցական տեսանկյունից չկայացած կամ հետամնաց հասարակությունը: Էլիտա ձևավորելու համար, սակայն, անհրաժեշտ է ստեղծել պայմաններ՝ հավասարություն [3], արդարություն և այլն: Վաղ հասարակություններում էլիտան նույնացվել է վերմարդկային և վերերկրային էակների հետ: Այդպիսի գաղափարներով տոգորված ժողովուրդները, հասարակությունները երբեք չեն նույնացրել իրենց էլիտայի հետ, որովհետև ենթադրվել է, որ էլիտար իմիջ ունեցող մարդկանց տրված իշխանությունը ունեցել է աստվածային ծագում: Հասարակ մահկանացուները ենթարկվել ու ծառայել են էլիտային անհավասարության և անազատության պայմաններում: Հաջորդիվ, միջնադարյան հասարակությունում էլիտան խոշոր ունեցվածք և կապիտալ ունեցող մարդկանց դասն էր, որը պատմության թատերաբեմում մնաց բավական երկար ժամանակ՝ ժառանգության իրավունքի շնորհիվ փոխանցելով իր հեղինակությունն ու հարստությունը գալիք սերունդներին: Միջնադարյան հասարակության կեղեքումներն ու ֆեոդալական ճնշումները «էլիտա» հասկացությանը բացասական երանգներ տվեցին որպես շահագործողների կառավարման արատավոր երևույթ: Պատմության նոր շրջանում ծագած զանգվածային ժողովրդավարության խնդիրը չէր կարող չմտահոգել քաղաքագետներին, որի արդյունքում 19-րդ դարասկզբից կրկին շրջանառության մեջ է դրվել «էլիտա» հասկացությունը:

Արդի հասարակությունում «էլիտա» հասկացությունը սահմանելու դժվարություններ կան, որոնց հիմքում ընկած ենհիմնականում հետևյալ խնդիրները.

- ***էլիտայի նույնականացման խնդիրը****. (մարդկանց տեսակների կամ խմբերի հետ նույնացումը, էվոլյուցիոն փուլերի ուսումնասիրությունը, էլիտայի որակական, կառուցվածքային և գործառութային կերպափոխումները),*
- ***իրավիճակային քաղաքականության խնդիրը****. (իրավիճակի փոփոխման գործոնը էլիտաների հաճախակի, իսկ երբեմն էլ կտրուկ կերպափոխման պատճառ է դառնում): Այժմյան գլոբալ քաղաքականությունն ու դերակատարների*

[2] Հոդվածն ընդունվել է 30.01.2018:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

լայն ցանցի ձևավորումը նպաստում են հասարակության տարբեր էլիտաների միջև անհավասարակշռության մեծացմանը, ինչն անխուսափելիորեն ազդում է քաղաքական էլիտայի ձևավորման վրա: Այդ իրողությունը հաստատելու եկավ 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի հետևանքով մի շարք երկրներում կառավարող նեո-լիբերալ քաղաքական էլիտաներ կորցրին իրենց իշխանությունը, իսկ որոշ երկրներում (Իտալիա, Հունաստան) քաղաքական էլիտան արմատապես փոխվեց [4]:

— ***էլիտա ձևավորելու խնդիրը.*** *(նոր մարդկանց հավաքագրելու ուղիների և սկզբունքների թափանցիկությունն ապահովելն ու երաշխավորելը):*

Հասարակական-քաղաքական համակարգի սուբյեկտներին տրվող ընդհանուր անունը, որը բնորոշում է հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցելու, որոշումներ կայացնելու, դրանց վրա ազդելու, քաղաքականության օրակարգ ձևավորելու կարողություններ և քաղաքական կշիռ (այդ թվում քաղաքական իմիջ) ունեցող սուբյեկտներին անվանում են ***էլիտա*** *[5]: Էլիտան ընդհանուր կամ նման հատկանիշներով (այդ թվումհոգեբանական, կրթական, գաղափարական, դիրքային և այլն), նպատակներով և շահերով միավորված հանրային սուբյեկտն է, որոնք ունեն հասարակության տարբեր ոլորտներում շոշափելի դերակատարություն:Ակտիվ դերակատարություն ունեցող մարդկանց և խմբերին հնարավոր չէ բացառել էլիտայից մի քանի պատճառներով: Առաջինն այն է, որ դրանք կարողանում են ազդել հանրային տրամադրությունների ձևավորման վրա, երկրորդ՝ հետևորդների շնորհիվ ազդել քաղաքական օրակարգի ձևավորման վրա: Հանրային տրամադրություններ ձևավորելու և դրանց վրա ազդելու կարողությունը հանրային սուբյեկտներին ազդեցիկ է դարձնում նաև քաղաքական էլիտայի կառուցակարգերում: Ելնելով վերը նշվածից՝ պետք է տարբերակել քաղաքականությամբ զբաղվող և քաղաքականության ոլորտում շոշափելի դերակատարություն ունեցող սուբյեկտներին: Ակտիվ քաղաքական դերակատարին չի կարելի բացառել էլիտայից, բայց ի տարբերություն քաղաքական էլիտայի, առաջինը չի մասնակցում պետական կառավարմանը: Քաղաքական էլիտան որոշակի պաշտոններ է զբաղեցնում պետական կառավարման համակարգում, մինչդեռ քաղաքականության ակտիվ դերակատարը քաղաքական էլիտայի մաս կազմելով պարտադիր չէ,որ պաշտոն զբաղեցնի պետական կառավարման համակարգում: Այդ մասին են փաստում իշխանության դերային և ինստիտուցիոնալ տեսությունները: Առաջինի սահմանմամբ՝ քաղաքական էլիտան պետության բարձրագույն իշխանությունը կրող սուբյեկտն է: Իսկ ինստիտուցիոնալ տեսության դիրքերից քաղաքական էլիտան պետական իշխանության ստորակարգությունում ռազմավարական տեղեր զբաղեցնող մարդիկ են կամ նրանց խմբերը [6]: Բացի նշված հատկանիշներից, էլիտաները տարբերվում են նաև բազմաթիվ այլ չափումներով. նպատակային գործունեության, գործառույթների, կառուցվածքային, վարքաբանական և այլն: Թվարկված տարբերություններով հանդերձ, պետք է նկատել, որ հասարակության և էլիտաներին միավորում է կամ կարող է միավորել քաղաքական ընդհանուր շահը: Հետևաբար քաղաքական ընդհանուր շահեր հետապնդող էլիտան նեղ իմաստով քաղաքական է [7]: Քաղաքական շահ հետապնդող էլիտան քաղաքական համակարգի կենտրոնն է, և կարող է որոշել էլիտայի ձևավորման ուղիներնու սկզբունքները: Այս իմաստով, արդի հասարակություններին բնորոշ կառուցվածքային և գործառութային սկզբունքով տարբերակված քաղաքական էլիտան հնարավորություն ունի ձևավորվելու ոչ միայն ընդհանուր շահի հիման վրա, այլև նոր մարդկանց հավաքագրել իրշարքեր սոցիալ-մասնագիտական խոշոր ավազանից [8]: Չխախտելով հանդերձ ինստիտուտցիոնալ տեսության և իշխանության ստորակարգության սկզբունքը՝ չի կարելի չհամաձայնել այն մտքին, որ ժամանակակից աշխարհում քաղաքական էլիտան միայն իշխանության հետ ասոցացվող մարդիկ չեն: Բազմակարծության և առաջնորդության նոր ձևերի տարածմանը զուգընթաց, հասարակական-քաղաքական գործընթացները և ինստիտուտները կառավարելու դե յուրե լիազորություններ ու պատասխանատվություն կրող սուբյեկտներից բացի, մեծացել են քա-*

ղաքականության վրա ազդեցության տարբեր կենտրոնների դերը: Դրանց շարքում պետք է առանձնացնել հատկապես հանրահայտ բլոգերներին, սոցիալական ցանցերում ակտիվ մարդկանց, ՁԼՄ-ները և այլք: Եթե հաշվի առնենք, որ ազդեցությունն ուղիղ համեմատական է իշխանությանը, ապա արդի հասարակություններում իշխանություն ունեն շատ լայն թվով դերակատարներ: Ի վերջո գալիս ենք այն եզրահանգման, որ քաղաքական էլիտայում, լայն իմաստով, ոչ միայն իշխանական դիրք և պաշտոն զբաղեցնող մարդիկ են, այլև հասարակության այն անհատներն ու մարդկանց խմբերը, ովքեր կարող են ոչ միայն ազդել հանրային տրամադրությունների վրա, այլև վետո կիրառել ընդհանուրի շահը պաշտպանելու համար: Վերջինն առարկայական է արևմտյան մոդելի քաղաքական էլիտաների համար, որոնք ունեն բարդ կառուցվածք և որոնցում արժևորվում են հանրային բարձր գիտակցությունը, մասնագիտական բանիմացությունը (կոմպետենիցա) և այլն: Մասնագիտական բանիմացության ոչ պատշաճ մակարդակը կամ ծայրահեղ դեպքում դրա բացակայությունը սուր բնույթ է ստանում հատկապես որոշումների կայացման ժամանակ:

Քաղաքական էլիտայի սահմանման պլյուրալ հայեցակարգի առանցքում է որոշումներ կայացնելու մեթոդական խնդիրը ժամանակակից հասարակական-քաղաքական համակարգերում [9]:Որոշումներ կայացնելուն առնչվող բոլոր գործընթացները դերակատարների լայն ցանց ինտեգրելու առանձնահատկություն ունեն, ընդ որում ժողովրդավարական հասարակություններում՝ ավելի շատ: Որոշումներ կայացնելու առանձնահատկություններով ու մեթոդաբանության տարբերություններ կան արևմտյան (ամերիկյան) և հետխորհրդային (ռուսական) երկրների քաղաքական մշակույթներում: Որոշումներ կայացնելու արևմտյան մշակույթն ունի գիտականության բարձր մակարդակ և մշակված մեթոդաբանություն: Ցանկացած ու հատկապես քաղաքական áñáßáõÙÝների լեգիտիմությունը ապահովելու ձգտումը գիտական մեթոդի և փաստարկման գործիքակազմի միջոցով, ապահովում է քաղաքական էլիտայի արդյունավետությունն ու մասնագիտական կամ գոնե ոլորտային բանիմացություն ունեցող առանցքային դերակատարների ներգրավվումը: Ի տարբերություն առաջինի, հետխորհրդային երկրներում քաղաքականության դերակատարներն ինտեգրված չեն, կամ մասնակի են ինտեգրված որոշումներ կայացնելու գործընթացին: Որոշումներ կայացնում են մեծ մասամբ ղեկավար օղակներում առանցքային դերակատարներ համարելով ստորակարգության վերին մակարդակներն ու նրանց բանիմացությունը: Այդ է պատճառը, որ քաղաքական որոշումների կայացումը վերջիններում ունի ստվերային և կենտրոնացված բնույթ: Ստվերայնությանը նպաստում են, իրենց հերթին, իշխանական ինստիտուտների բալանսավորված համակարգի, իրար հակակշռող սկզբունքների բացակայությունը, քաղաքացիների շրջանում առկա անվստահությունն ու գիտական (մասնագիտական) խմբեր ինտեգրող անհրաժեշտ կառուցակարգերի բացակայությունը:

Քաղաքական էլիտայի սահմանման որոշումների չափումը չի պատասխանում այն հարցին, թե հասարակության էլիտաներից որն է կառավարում կամ պետք է կառավարի: Այստեղ կարևորվում են բուն գործընթացը և բոլոր՝ ուղղակիորեն առնչվող և օրակարգի ձևավորման վրա ազդող դերակատարների ինտեգրումը: Կարծում ենք՝ քաղաքական էլիտան շատ լայն է սահմանվում այս մոտեցման շրջանակներում, ինչն իր հերթին նվազեցնում է գործընթացի հանդեպ պատասխանատվությունն ու հետադարձ կապի ապահովումը:

Քաղաքականությունը և կառավարումը անորոշության տիրույթներ չեն: Անկախ այն բանից, թե որքան է քաղաքական էլիտայի ազդեցությունը, բանիմացության մակարդակն ու կառավարման արդյունավետությունը, այն առաջին հերթին իշխանության ստորակարգությունում պաշտոնավարող, համազգային խնդիրներ լուծող և որոշումներ կայացնող, քաղաքական տեսլականն ուղենշող և էլիտար մշակույթ կրող մարդիկ են կամ նրանց խմբերը [10]: Քաղաքական էլիտայի իշխանությունն ունիօբյեկտիվ կառուցվածքային դրսևորում, որով սահմանվում են քաղաքական էլիտայի վարքը, հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը քաղաքական համակարգի և հա-

սարակության առջև: Հավելենք նաև, որ հատկապես օբյեկտիվ վարքագիծ և էլիտար մշակույթ ունենալու, քաղաքական պատասխանատվություն կրելու դիրքերից, քաղաքական էլիտայի սահմանման իշխանական հայեցակարգն ակնհայտ առավելություն ունի որոշումների հայեցակարգի համեմատ: Մյուս կողմից, իշխանական լծակների համար պայքարը հետմոդեռնիստական հասարակությունում այլևս միայն քաղաքականության ավանդական դերակատարների գործը չէ [11]: Իշխանության (ազդեցության) անհամաչափությունը խորացնող գործընթացների շարունակականությունը, որն ակնհայտ երևում է որոշումների կայացման և քաղաքականության տարբեր դերակատարների փոխազդեցության գործող ձևաչափերի, իշխանությունների տարանջատման ձևերի և գործառութային փոփոխությունների և այլ երևույթների ուսումնասիրության ժամանակ, էականորեն ազդում է քաղաքական էլիտայի ձևավորման ուղիների և սկզբունքների սահմանման վրա:

Իշխանության և որոշումներ կայացնելու խնդիրների առանցքում ակտուալ է դառնում քաղաքական էլիտայի արդյունավետությունն ընդհանրապես և վերջինիս գործունեության արդյունքները գնահատելու խնդիրը: Քաղաքական էլիտան արդյունավետ գործող մարդիկ են, որոնք կարողանում են հաջողությունների հասնել քաղաքականության և քաղաքական գործունեության մասնագիտական ոլորտում: Քաղաքական էլիտան քաղաքական միտքը կերտողներն են, քաղաքական ավանդույթներ ստեղծողները և այդ ավանդույթների շարունակականությունն ապահովող մտավոր ուժը: Վերոնշյալ սահմանման շրջանակներում քաղաքական էլիտան կարելի է բաժանել երկու շերտերի.

— կենդանի քաղաքականությամբ զբաղվողներ

— քաղաքագիտությամբ զբաղվողներ:

Արդյունավետ քաղաքական էլիտան, նախևառաջ, որակական բարձր հատկանիշների կրողը պետք է լինի և համապատասխանեցնի այդ որակներն հասարակության պահանջմունքներին [12]: Քաղաքական էլիտայի արդյունավետությունը որոշում են նրա բնութագրիչ հատկանիշները, վարքն ու հարաբերություններն ինչպես էլիտայի ներսում (ներխմբային), այնպես էլ հասարակության հետ հարաբերություններում: Արդյունավետ քաղաքական էլիտայի բնորոշ հատկանիշները պետք է լինեն ընդհանուր նպատակին և շահերին նվիրվածությունը, հակադիր քաղաքական ուժերի հանդեպ հանդուրժողականությունը: Վարքը որոշակիացնում է քաղաքական էլիտայի գործողությունները, դրանց պատճառներն ու հիմնական ազդակները: Իրենց հերթին, գործողությունները բխում են թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ հանգամանքներից: Քաղաքական էլիտան բնութագրող որակական և վարքաբանական հատկանիշները ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, ուստի ձևավորված կարելի է համարել այն էլիտան, որն ունի քաղաքական մշակույթի ձևավորված ավանդույթներ և ընդհանուր կեցություն:

Քաղաքական էլիտայի արդյունավետությունը պայմանավորող գործողություններ են էլիտայի թարմացման, նոր մարդկանց հավաքագրելու նպատակով մշակված և փորձված կառուցակարգերի կիրարկումը: Արտադրական հարաբերությունների հետ նույնացվող այդպիսի գործողությունների տրամաբանությունը թույլ է տալիս հասարակությունն ու քաղաքական էլիտան նույնացնել այնպիսի ինստիտուտների հետ, որոնք ի վիճակի են օպտիմալ ձևով կառավարելու մարդկային կապիտալի և ռեսուրսների արտադրությունն ու վերարտադրությունը քաղաքական համակարգի շրջանակներում: Միանգամայն օբյեկտիվ է այն, որ քաղաքական էլիտայի արդյունավետությունը չափել նշանակում է գնահատել նախևառաջ էլիտայի որակական հատկանիշներն ու վարքաբանությունը, ապա նաև կառավարելու ընդունակ ուժեր ձևավորելու, այդ նպատակին հետամուտ հավաքագրման մոդելների արդյունավետությունը:

Քաղաքական էլիտայի անարդյունավետության հիմնական պատճառներ կարող են լինել նոր մարդկանց հավաքագրելու ժամանակ թույլտրվող այն սխալները, որոնցից պետք է խուսափել, մասնավորապես.

— Նոր մարդկանց ընտրությունը կամ նշանակումը անցյալից ստացված ժառանգության և գիտելիքների հիման վրա: Որպեսզի քաղաքական էլիտայի ձևավո-

րումը լինի արդյունավետ, հարկավոր է խրախուսել ապագան կանխատեսելու գիտելիքներն ու կարողությունները: Միայն այդպես է հնարավոր ներդնում անել ապագայի համար:

— *Բազմազանության խիստ պակասը: Քաղաքական էլիտան պետք է ձևավորվի բազմազանության սկզբունքով: Բազմազանությունն սկսվում է էլիտայի ներսում կանանց և տղամարդկանց դերերի բաշխման հավասար իրավունքներ և հնարավորություններ ստեղծելու պայմանից և ավարտվում տարբեր արժեքային համակարգի ու սոցիալական կարգավիճակի տեր մարդկանց համալրման անհրաժեշտությամբ: Բազմազանություն ապահովելու դեպքում է միայն հնարավոր ընտրել ճիշտ մարդկանց: Իսկ եթե հաշվի առնենք, որ քաղաքական իշխանության տարբեր մակարդակներում արդյունավետ աշխատանքի համար մտավոր և մարդկային տարբեր ռեսուրսներ են պետք, ապա, բազմազանության սկզբունքը հնարավորություն է տալիս նեղ մասնագետներ հավաքագրել:*

— *Քաղաքական էլիտայի՝ սեփական միջավայրից մարդկանց առաջադրելու և ընտրելու նախապատվությունը: Վերոնշյալ խնդիրը ունի դրական կողմեր: Առաջինի առավելությունն այն է, որսեփական միջավայրից ընտրված մարդիկ համակարգը գիտենններսից, ունեն կառավարչական գիտելիքներ և պատրաստ են ստանձնելու պարտականություններ: Նման մարդիկ ճանաչելի և կանխատեսելի են նաև բուն համակարգի կողմից, ինչը ևս շատ կարևոր նշանակություն ունի: Հատկանշական է, որ այս միտումը կա հետխորհրդային երկրներում և ծագում է բարեփոխումներ իրականացնելու այն փորձից, ըստ որի՝ բարեփոխումներ իրականացնելիս արդյունավետ է համակարգի մարդականց նախապատվություն տալը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նոր մարդկանց հավաքագրելու գրավչությունը մեծացնում է քաղակական էլիտայի իշխանության և ազդեցության հնարավորությունները:*

— *Քաղաքականության մեջ արմատավորվելու և անփոխարինելիության ախտանիշը: Քաղաքական էլիտայի ձևավորումը որպես արդյունավետ կառավարման պայման, պետք է արմատավորվի քաղաքական մշակույթում: Բայց շատ հաճախ էլիտան նոր մարդկանցով համալրելու գործընթացն ունի ռիսկայնության բարձր աստիճան քաղաքական համակարգերի կայունության տեսանկյունից: Դա այդպես է բոլոր այն համակարգերում, որտեղ քաղաքական էլիտան որպես կառավարող և առաջնորդող ուժ, իրեն համարում է անփոխարինելի: Անփոխարինելիության ախտանիշն ի հայտ է գալիս նաև իշխանության կենտրոնացման հետևանքով: Իսկ կենտրոնացված իշխանություն ունեցող համակարգերում տաղանդների գեներացման և զարգացման գործընթացը չի կարող հաջողություն ունենալ:*

— *Քաղաքական էլիտայի կադրային թարմացումը միայն ճգնաժամերի ժամանակ: Ճգնաժամի պատճառ կարող է լինել երկրի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, պատերազմները, քաղաքական անսպասելի իրադարձությունները: Քաղաքական էլիտայի համար նոր մարդկանց հավաքագրելու արդյունավետությունը գնահատվում է դրված խնդիրների համար օպտիմալ լուծումներ գտնելու, նպատակներն և ծրագրերը իրականացնելու կարողությամբ օժտված մարդկանց ցանց ձևավորելու միջոցով: Թվարկված խնդիրներից ելնելով՝ քաղաքական էլիտայի համար նոր մարդկանց հավաքագրումը կոչված է կանխելու ճգնաժամային իրավիճակներում որոշումներ կայացնելու, լրացուցիչ ռեսուրսներ վատնելու և կադրային անհամապատասխան ընտրություն անելու հավանականությունը:*

Ամփոփելով՝ նշենք, որ ժողովրդավարական հասարակություններում քաղաքական էլիտայի արդյունավետությունն ու սոցիալական արժեքը հասարակությանը մոտ կառավարելը, հասարակության համար աշխատելն և արարելն է՝ ինտեգրված հասարակություն և գործողությունների ընդհանուր հարթակ ապահովելու միջոցով: Արագ

փոփոխվող հասարակությունների ու իրավիճակային քաղաքականությունների արդի դարաշրջանում քաղաքական էլիտայի արդյունավետություն նշանակում է վերջինիս համարժեք արձագանքը բոլոր այն խնդիրներին, որոնք կարող են ծագել ինչպես քաղաքական համակարգի շրջանակներում, այնպես էլ դրանից դուրս:

Քաղաքական էլիտան քաղաքական համակարգի այն հիմնարար հենքն է, որի վրա կառուցվում է քաղաքական համակարգի մյուս դերակատարների, տարբեր էլիտաների (տնտեսական, ռազմական, մշակութային, տարածաշրջանային և այլ) հետ հարաբերությունների վերնաշենքը՝ առաջնորդության արժեքների և քաղաքական մշակույթի ձևավորման շնորհիվ: Թեև առաջնորդության հայեցակարգը էական փոփոխություններ է կրել իր ծագման վաղ ժամանակներից մինչ օրս, այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ քաղաքական էլիտայի սահմանման կարևոր կողմերից մեկը: Առաջնորդություն և էլիտա-կապը երկու գործոններով է պայմանավորված, որոնց, կարելի է ասել զարգանում են զուգահեռ. մի կողմից՝ էլիտայի աճող իշխանությունը, իսկ մյուսից՝ իշխանության անհատականացված ձևերի տարածումը: Հատկանշական է, որ առաջնորդության միտումներն ավելի ցայտուն են պետական իշխանության տարբեր օղակներում [13]: Հատկանշական է, որ քաղաքական էլիտայի ձևավորումը «ծայրահեղ անհատականություններից» Դ.Բ-րուքսը համարում է տեղեկատվական հասարակության առանձնահատկություններից մեկը: Անհատականություններից ձևավորվող արդի քաղաքական էլիտաները քամահրանքով են վերաբերում ձևային դերերին, ստորակարգության և իշխանական ինստիտուտներին [14]: Այս մոտեցումը քննադատում են ինստիտուցիոնալիստները, որոնք պնդում են, որ արդի հասարակության բարդ կառուցվածքը պահանջում է, որ քաղաքական էլիտան առավելագույնս ինստիտուցիոնալացված լինի [15]: Ընդ որում նման պահանջն ավելի շատ կապված է կադրերի հավաքագրման ինստիտուցիոնալ ուղիների և սկզբունքների ձևավորման անհրաժեշտության հետ: Քաղաքական էլիտայի կադրային հենքից է հավաքագրվում քաղաքական և պետական բարձր պաշտոնների վերնաշենքը: Վերոնշյալից էլ կարելի է եզրակացնել, որ քաղաքական էլիտան ձևավորված է, երբ կան և արդյունավետ գործում են էլիտան նոր մարդկանցով համալրելու սահմանադրական կարգ, ժողովրդավարական ուղիներ և սկզբունքներ: Կառուցվածքային բարդ համակարգ ունեցող հասարակություններում քաղաքական էլիտայի ձևավորման կառուցակարգերը առավելագույնս ինստիտուցիոնալ պետք է լինեն:

Քաղաքական էլիտայի ձևավորումն ու սահմանումը ցանկացած հասարակության առաջընթացի անհրաժեշտ պայման է: Ձևավորման գործընթացը պետք է համապատասխանի հասարակության և քաղաքական համակարգի պահանջմունքներին, գիտակցական մակարդակին: Որպես ինստիտուտ՝ քաղաքական էլիտան կոչված է հասարակության իրավունքների և հնարավորությունների իրացման համար օպտիմալ պայմաններ ստեղծել, քանի որ էլիտա ձևավորում է ինքը հասարակությունը: Էլիտան հասարակության մի մասն է:

Այսպիսով, հասարակության և քաղաքական համակարգում քաղաքական էլիտայի դերը սահմանելիս պետք է առանձնացնել հավելյալ երկու կետեր.

— *Քաղաքական էլիտան սահմանելիս հաշվի առնել քաղաքականության նպատակն ու խնդիրները: Արդի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հետմոդեռնիստական հասարակություններում քաղաքական էլիտան և քաղաքականությունը ձևավորվում են «գործառող բազմակարծության» (պլյուրալիզմի) և «շահեկան կենտրոնացման» սկզբունքներով [16]: «Գործառող բազմակարծության» սկզբունքը ենթադրում է մասնակցության մշակույթ, դերակատարների լայն ցանց, իսկ «շահեկան կենտրոնացման» սկզբունքի պարագայում առաջնային կարևորվում է քաղաքականության բարեփոխումներ ծեռնարկող ուժերի շուրջը համախմբվելու և աշխատելու պատրաստականություն: «Գործառող բազմակարծություն» նշանակում է նաև ապակենտրոն (այսինքն հատվածական) և կենտրոնացված (ունիֆիկացված) իշխանական հարաբերությունների օպտիմալ եղանակ: Գործնականում յուրաքանչյուրն էլ կարող են*

արդյունավետ լինել: Դրանց արդյունավետությունը որոշում են քաղաքականության նպատակն ու առաջնահերթությունները: Քաղաքականության իրականացման ժամանակ առաջնահերթությունները կարող են փոխվել, որիցհետո կփոխվի նաև քաղաքական էլիտայի դերը:

— *Քաղաքական էլիայի ձևավորման, սահմանման և արդյունավետության գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կադրային քաղաքականությունը, նոր մարդկանց հավաքագրելու կառուցակարգերը: Ձևավորված քաղաքական էլիտա ունեցող հասարակություններում առաջինը սահմանվում է հիմնականում ինստիտուցիոնալ մարմինների ու կառույցների միջոցով [17]: Դրանք կատարում են գործող քաղաքական համակարգի շրջանակներում գաղափարներ գեներացնելու, համակարգային արժեքներ և էլիտար մշակույթ ձևավորելու և էլիտայի անընդհատությունն ապահովելու գործառույթները: Ինչպես ցանկացած արդյունավետ համակարգի, այնպես էլ քաղաքական էլիտայի ձևավորումը պայմանավորված է կադրերով: Արդյունավետ քաղաքական էլիտա ձևավորելու համար անհրաժեշտ է, որ կադրային քաղաքականությունը մշակվի ու իրականացնվի քաղաքականության առաջնահերթություններից ելնելով: Իսկ ինչ վերաբերում է քաղաքական մշակույթին, ապա այն պետք է ստանձնի քաղաքական էլիտայում կոնսենսուսի և երկխոսության ձևավորման ու հաստատման գործառույթը, ընդ որում ոչ միայն հասարակության տարբեր էլիտաների միջև, այլև քաղաքականության և ռազմավարական որոշումների իրականացման շուրջ:*

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Бердяев Н.А, Философия неравенства: Письма к недругам по социальной философии, Обелись, Берлин, 1923, стр. 55
2. Best Heinrich, Highly J., Political Elites in the Transatlantic Crisis, pub. by Palgrave MacMillan, New York, 2014, pp. 176-177
3. Bell J., Populism and Elitism: Politics in the Age of Equality, by ‘Ragnery Gateway’, Washington DC, 1992, p.4
4. Peter J., Francesca G, Political Leadership under the New Political Management Structures, Office of Deputy Prime Minister: London, January, 2005, pp. 13-14
5. Ашин Г.К., Современные теории элит: Критический очерк, «Международные отношения», 1985, стр. 55
6. Mills Ch. W., The Power Elite, ‘Oxford Univ. Press’, 1956
7. Hartman M., The Sociology of Elites, «Routledge Taylor Francis Group», London and New York, 2007, p. 25
8. Bachrach P., The Theory of Democratic Elitism, New York and London, 1980, p. 67
9. Косов Р.В., Пределы власти (история возникновения, содержание и практика реализации доктрины разделения властей), Изд. Тамб. гос. техн. ун., 2005 г., стр. 8-9
10. Huntington S.P., Political Order in Changing Societies, ‘Yale Univ. Press’, New Haven and London, 1973, p. 17
11. Steen A., Political Elites and the New Russia: The Power Basis of Yeltsin’s and Putin’s regimes, ‘Taylor & Francis e-Library’, Routledge Curzon Series on Russian and East European Studies, USA and Canada, 2004, pp. 1-2
12. Stephen J.Mcname, Robert K. Miller, The Meritocracy Myth, 3-rd ed., Lanham, Maryland: ‘Rowman and Littlefield’ Publishers, 2014, pp. 72-74

13. Мохов В.П., Региональная политическая элита России (1945-1991гг.), Монография, Перм. книж. изд., 2003, стр. 38
14. Peter J., Francesca G, Political Leadership under the New Political Management Structures, Office of Deputy Prime Minister: London, January, 2005, pp. 26-27
15. Брукс Д., Бобо в раю, Откуда берется новая элита, «Ад Магинем Пресс», 2013, стр. 84
16. The Impact of Recruitment Strategy on Fair and Open Competition for Federal Jobs/ A Report to President and the Congress of the US by the US Merit System Protection Board, 1615M. Street, N.W Washington, DC 20419-001, 2015, pp. 42-45
17. Wedel J., Shadow Elite: How the Worlds New Power Brokers Undermine Democracy, Government and the Free Market, New York, 2009, pp. 15-16

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Քաղաքական էլիտայի ձևավորման և սահմանման խնդիրների շուրջ
Կատերինա Ալթունյան

Քաղաքական էլիտայի սահմանումը ժամանակակից հասարակության պայմաններում ունի բազմաթիվ դժվարություններ: Քաղաքականության դերակատարների ընդլայնմանը զուգընթաց՝ դրանք ավելի արդիական են դառնում: Հոդվածում քաղաքական *էլիտա* հասկացությունը սահմանվել է երկու հայեցակարգերում՝ իշխանական և որոշումների: Լինելով այն կենտրոնը, որի վրա կառուցվում է քաղաքականության դերակատարների միջև հարաբերությունների վերնաշենքը, քաղաքական էլիտայի ձևավորումը հիմնականում համապատասխանում է հասարակության պահանջմունքներին ու գիտակցության զարգացման մակարդակին: Քննարկման առանցքում են նաև էլիտայի արդյունավետությունը, չափանիշները և կադրային քաղաքականության որոշ խնդիրներ:

РЕЗЮМЕ
Проблемы формирования и интерпретации политической элиты
Катерина Алтунян

***Ключевые слова*:** *политическая элита, политическое решение, политическая власть, политический актор, эффективность, формирование элиты, управление, политика.*

В современных обществах существует множество трудностей в определении политической элиты. С расширением политических субъектов определение политической элиты стало более актуальным. В современной политологии к определению сущности политической элиты существует множество различных подходов, из которых выделены два основных: властный и принятие решений. Политическая элита является центром политической системы и должна формироваться в соответствии с потребностями общества. На ней строится система отношений между всеми политическими субъектами. В статье уделяется внимание также вопросам эффективности элиты, кадровой политики и т.д.

.

SUMMARY
Issues on Formation and Definition of Political Elite
KaterinaAltunyan

Keywords*: political elite, political decision, political power, political actor, effectiveness, elite recruitment, governance, politics.*

The definition of political *elite* has become problematic in modern societies. There must be a means of identifying who is included and whom excluded. The expansion of political actors has confronted with the dilemma of defining the political elite. This article investigates political elite within the framework of power and decision-making concepts. Being the center of political system it should be formed in accordance with the needs of society, mainly because it clarifies the relationship between base and superstructure or the interactions between the political actors. The article also discusses issues that require urgent attention toeffectiveness and personnel policy.